**Արձանագրություն N 2**
**Протокол N 2**

**«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-24/7» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի**
**Внеочередное заседание оценочной комиссии под кодом «EQ-BMAPDzB-24/7»**

ք. Երևան — 15.03.2024թ. ժամը 11:00

г. Ереван — 15.03.2024г. 11:00ч.

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ստեփանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Շ. Հարությունյան, Ռ. Ումրոյան, Վ. Հարությունյան, Վ. Աղբալյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյան

Председатель комиссии А. Степанян
Члены комиcии: Ш. Арутюнян, Р. Умроян, В. Арутюнян, В. Агбалян
Секретарь комиcии: Г. Мурадян

1. **«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-24/7» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 13.03.2024 թվականին ներկայացված հարցմանը պարզաբանում տրամադրելու վերաբերյալ**
**Ответ на разъяснение по запросу поданного 13.03.2024 в рамках закупочной процедуры под кодом «EQ-BMAPDzB-24/7»**

---

(Ա. Ստեփանյան А. Степанян)

**1. Պարզաբանման պահանջի տեքստ**
**Текст запроса для разъяснения**

Could you please clarify the following questions for us?
1. Are there cleaning fees and loading and unloading fees for dismantling the old elevator?
2. Is a professional organization required to check whether the elevator installation is qualified?
3.Who will be responsible for communicating with local residents and local government agencies during the construction process? Coordinated by whom? (Relating to construction noise and residents' lives)
4.Is the construction period 5 months after the signing of the contract or 5 months after the elevator arrives? When is the Transfer Acceptance Agreement signed? Is an inspection agreement required?
5.Do you accept bid guarantee issued directly by foreign banks?

**Պարզաբանում տրամադրելու տեքստ.**
**Текст разъяснения**

1.Վաճառողի միջոցներով պետք է իրականացվի հին վերելակի ապամոնտաժում, ապամոնտաժված թափոնների բեռնում և հանձնում (տեղափոխում Երևանի վարչական տարածքում պատվիրատուի կողմից նշված հասցե): Հին վերելակի ապամոնտաժման և նոր վերելակի տեղադրման արդյունքում առաջացած շինարարական աղբի տեղափոխում Նուբարաշենի խճուղուն հարող աղբավայր, որը հանձնված է վարձակալության և աղբի տեղադրման վճարի հարցը կարող է քննարկվել վարձակալի հետ:

2.Վաճառողը պետք է ունենա համապատասխան (էներգետիկ ոլորտի) լիցենզիա և վերելակների անվտանգ սպասարկումն իրականացնող որակավորված աշխատակիցներ:

-Մրցույթի արդյունքում ընտրված մասնակիցը յուրաքանչյուր վերելակի փոխարինման ավարտից հետո պետք է ներկայացնի նոր տեղադրված վերելակի տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացություն և վերելակի անձնագիր (հայերեն և/կամ ռուսերեն լեզվով):
Կատարված աշխատանքը կարող է ընդունվել միայն պետական լիազոր մարմնի կողմից տրված դրական եզրակացության առկայության դեպքում:
3.Աշխատանքների ընթացքում վաճառող կազմակերպության ներկայացուցիչն է պատասխանատու բնակիչների և ՏԻՄ-երի հետ կապերի/շփումների համար, բնակիչների հետ կապված հարցերով անհրաժեշտ է համագործակցել շենքի կառավարման մարմնի հետ:
4. Ապրանքի մատակարարման ժամկետը պայմանագիրը/ համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 150 օրացուցային օր է:
Հրավերով նախատեսված պայմանագրի նախագծով սահմանված է՝
5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
նոր տեղադրված վերելակի տեխնիկական անվտանգության փորձաքննության համար անհրաժեշտ է պայմանագիր կնքել պետական լիազոր մարմնի հետ:
5.Երաշխիք թողարկող օտարերկրյա բանկը՝ օրինակ SWIFT համակարգով երաշխիքների հեղինակայնացված հաղորդագրությունը պետք է համապատասխան ստուգումնաբանալիներով փոխանցի ՀՀ առևտրային բանկերին, որոնց հետ ունի թղթակցային հարաբերություններ՝ համապատասխան երաշխիքի թողարկման իսկությունը ստուգելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:
Принято решение: за - 5, против - 0.

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.**
**Имена и фамилии членов комиссии, присутствующих на заседании.**

| Հանձնաժողովի<br>Комиссии | | |
|---|---|---|
| Նախագահ՝<br>Председатель | [signature] | Ա. Ստեփանյան<br>А. Степанян |
| Անդամներ՝<br>Члены | [signature] | Շ. Հարությունյան<br>Ш. Арутюнян |
| | [signature] | Ռ. Ումրոյան<br>Р. Умроян |
| | [signature] | Վ. Հարությունյան<br>В. Арутюнян |
| | [signature] | Վ. Աղբալյան<br>В. Агбалян |
| Քարտուղար՝<br>Секретарь | [signature] | Գ. Մուրադյան<br>Г. Мурадян |